«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

22 Մայիսի 2024, N 10 - 1

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ֆակուլտետի դեկանի՝ 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ֆակուլտետում իրականացված ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2023-2027 թթ. զարգացման ռազմավարությամբ նախատեսված գործողությունների կատարման մասին հաշվետվությունը (զեկուցող՝ կառավարման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մ.Է.Մովսիսյան)՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Կառավարման ֆակուլտետի ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարվածը գնահատել բավարար:

2. Ֆակուլտետի դեկանատին՝

1) համալսարանի գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումները քննարկել ֆակուլտետի գիտական խորհրդի և ամբիոնների նիստերում, առկա թերությունների վերաբերյալ մշակել համապատասխան միջոցառումներ դրանք շտկելու ուղղությամբ,

2) հսկողություն իրականացնել դասալսումների գործընթացի նկատմամբ, ֆակուլտետի գիտական խորհրդում պարբերաբար քննարկել դրանց արդյունքները,

3) ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերում պարբերաբար անդրադառնալ դասաձախողումներին, դրանց կանխարգելման նկատմամբ լինել հետևողական,

4) ամբիոններում աշխատանքներ իրականացնել մագիստրոսական խմբերում դասավանդման մակարդակն ու մատուցվող նյութի որակը բարձրացնելու և բարձրորակ դասախոսական կադրերով ապահովելու ուղղությամբ,

5) ըստ կրթական ձևերի և ակադեմիական խմբերի իրականացնել Moodle էլեկտրոնային ուսուցման հարթակի սահմանված ձևաչափով կահավորված մոդուլների մշտադիտարկում,

6) հսկողության տակ պահել դասամատյաններում ուսանողների հաճախումների և ակտիվության հաշվառման ու գնահատման գործընթացը,

7) ուշադրության կենտրոնում պահել ավարտական աշխատանքների (մագիստրոսական թեզերի) թեմաների և փորձառության վայրի ընտրության գործընթացները՝ բացառելով անհամապատասխանությունները,

8) ուսանողների շրջանում ստուգարքային առարկաների նկատմամբ անտարբերության վերացման նպատակով ամբիոնների հետ միասին սահմանել գիտելիքի ստուգման նոր մոտեցումներ,

9) ակտիվացնել ուսանողական գիտական ընկերության ֆակուլտետային խորհրդի գործունեությունը՝ առավելագույնս ներգրավելով հետազոտական աշխատանքի ունակություններով օժտված ուսանողներին և մագիստրանտներին,

10) հետևել աշխատանքային կարգապահությանը՝ խախտումների ցանկացած դեպք դարձնելով առանձին քննարկման առարկա,

11) առավել արդյունավետ դարձնել դեկանատի աշխատողների կողմից ուսանողներին մատուցվող ծառայությունները:

3. Ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոններին՝

1) կրթության որակի բարելավման շարունակականության համատեքստում արտաքին և ներքին շահառուների, ինչպես նաև փորձագետների հետ համատեղ պարբերաբար վերանայել կրթական ծրագրերը՝ համապատասխանեցնելով ներքին և արտաքին աշխատաշուկաների պահանջներին,

2) ուշադրության կենտրոնում պահել դասախոսների ընտրության և համալրման գործընթացը՝ նախապատվություն տալով բանիմաց, ակտիվ գիտահետազոտական գործունեություն իրականացնող, մանկավարժական և մասնագիտական անհրաժեշտ ունակություններ ունեցող կադրերին,

3) մասնագիտական կատարելագործման և դասավանդման մեթոդաբանության գծով ներքին և արտաքին շահառուների կարիքների վերհանման արդյունքների վերլուծության հիման վրա շարունակական կրթության բաժնի հետ համատեղ նախաձեռնել ֆակուլտետի ակադեմիական կազմի վերապատրաստումներ,

4) սահմանել և կանոնակարգել խնամարկուի (կուրսղեկի) գործառույթները՝ մեծացնելով խնամարկուների (կուրսղեկների) ինստիտուտի դերը կրթական որակի բարձրացման գործընթացում,

5) ուսանողների շրջանում վերլուծական և հետազոտական հմտությունների ձեռքբերման նպատակով աշխատանքներ իրականացնել «անհատական աշխատանք» կրթական բաղադրիչի դերի բարձրացման ուղղությամբ,

6) ուսանողների շրջանում ստուգարքային առարկաների նկատմամբ անտարբերության վերացման նպատակով սահմանել գիտելիքի ստուգման նոր մոտեցումներ,

7) ամփոփիչ ստուգման տարբեր ձևերում գնահատման էական, ինչպես նաև միևնույն դասընթացի շրջանակներում տարբեր ակադեմիական հոսքերում և խմբերում տարբեր դասախոսների գնահատման մոտեցումների էական տարբերությունները մեղմելու նպատակով սահմանել հարցումների և գնահատման համապատասխան մոտեցումներ,

8) բացառել ավարտական աշխատանքների (մագիստրոսական թեզերի) թեմաների և փորձառության վայրի ընտրության անհամապատասխանությունները,

9) կամընտրովի դասընթացների ընտրությունը կազմակերպելու նպատակով համասարանում գործող մեթոդական ուղեցույցներին համապատասխան կահավորել Moodle հարթակի համապատասխան մոդուլը, մասնավորապես՝ կամընտրովի դասընթացների ծրագրերը, դրանց բովանդակությունը, ակնկալվող վերջնարդյունքները, ուսումնառության և գիտելիքի գնահատման ընտրված սկզբունքները, դասավանդող դասախոսի տվյալները,

10) բոլոր ակադեմիական խմբերում դասավանդվող միևնույն դասընթացի վերաբերյալ անհրաժեշտ ուսումնառության մեթոդական նյութերով Moodle հարթակը կահավորել միասնական ձևով՝ համալսարանում գործող մեթոդական ուղեցույցներին համապատասխան,

10) նպաստել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտական հրապարակումների թվի ավելացմանը ինչպես հանրապետության գիտական ամսագրերում, այնպես էլ Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված ամսագրերում,

11) ապահովել ամբիոնի ակադեմիական կազմի հետազոտությունների արդյունքների հասանելիությունն ուսանողների և այլ շահառուների շրջանում,

12) խրախուսել հայալեզու գրքերի, ուսումնական ձեռնարկների, դասախոսությունների նյութերի, խնդիրների և թեստերի ժողովածուների հրատարակումը,

13) խրախուսել Erasmus+-ի շրջանակներում դասախոսների փոխանակման ու գործընկեր համալսարաններում դասավանդման ծրագրերին ամբիոնների դասախոսների ակտիվ մասնակցությունը:

4. Սույն որոշումը քննարկել ամբիոնների առաջիկա նիստերում և ձեռնարկել համապատասխան միջոցներ նշված հանձնարարականների կատարման համար:

5. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Մ.Ս.Ասլանյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Վ. Գրիգորյան**

2024 թ. մայիսի 22
Երևան